# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Բելառուսի Հանրապետության Մինսկի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզերի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին**

Բելառուսի Հանրապետության Մինսկի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզերը, հետագայում <<Կողմեր>>, ելնելով իրավահավասար և վստահելի գործընկերային հարաբերությունների կառուցման և զարգացման մտադրությունից;

համաձայն Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև գործող պայմանագրերի, որոնք նպաստում են տարբեր բնագավառներում համագործակցությանը;

ուշադրություն դարձնելով Բելառուսի Հանրապետության Մինսկի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզերի միջև հաստատված բարեկամական հարաբերություններին՝ պայմանավորվեցին ներքոշարադրյալի շուրջ.

## ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կձգտեն զարգացնել հավասարության, փոխըմբռնման, հարգանքի և վստահության վրա հիմնված երկարաժամկետ և բազմակողմանի առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապեր:

## ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, փոխշահավետ համագործակցությունը խրախուսելու նպատակով, կաջակցեն Բելառուսի Հանրապետության Մինսկի և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզերի տնտեսվարող սուբյեկտների միջև կապերի հաստատմանը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով արտադրական, կոոպերացիային և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

## ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը աջակցություն ցույց կտան տարբեր ձևերով տնտեսական համագործակցություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին, մասնավորապես համատեղ նպատակային ծրագրերի և նախագծերի մշակման և իրականացման, ներդրումային համագործակցության զարգացման, ցուցահանդեսային-տոնավաճառային միջոցառումների անցկացման ճանապարհով:

## ՀՈԴՎԱԾ 4

Կողմերի փոխազդեցությունը կիրականացվի տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, արձանագրությունների հիման վրա, ընդ որում դրանք ստորագրած իրավաբանական անձինք կրում են ամբողջական պատասխանատվություն իրենց պարտականությունների կատարման համար:

## ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը իրականացնում են տեղեկատվության փոխանակում ձեռնարկատիրական գործունեության, օտարերկրյա ներդրումների կարգավորման փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:

Կողմերը պարտավորվում են ժամանակին տեղեկացնել միմյանց Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության օրենսդրություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սույն Համաձայնագրի իրականացման վրա:

## ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը, ձեռք բերված երկկողմ համաձայնությունների համապատասխան, կաջակցեն իրենց տարածքներում իրավաբանական անձանց ներկայացուցչությունների փոխադարձ բացելուն և կօժանդակեն նրանց գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

## ՀՈԴՎԱԾ 7

Կողմերից յուրաքանչյուրը գործող օրենսդրության համաձայն իրենց տարածքներում կձգտի ապահովել նպաստավոր պայմաններ տնտեսվարող սուբյեկտների կողմից առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության իրականացման համար:

## ՀՈԴՎԱԾ 8

Կողմերը մտադրվում են տեղեկատվություն փոխանակել մշակույթի և արվեստի կազմակերպությունների աշխատանքային փորձի, իրենց տարածքներում գործող ազգային հանրույթների ստեղծագործական գործունեության մասին:

Կողմերը կձևավորեն և կխորացնեն կապերը կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական պաշտպանության, սպորտի և տուրիզմի բնագավառներում:

## ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր ձևով չի տեղեկացնի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է մյուս Կողմի ծանուցման ստանալու օրվանից երեք ամիս անց:

Իրականացվել է ---------- քաղաքում, 2013թ. ---------- --------- ին, երկու օրինակից, ռուսերեն և հայերեն լեզուներով, ընդ որում օրինակներից յուրաքանչյուրն ունի համարժեք ուժ:

| | |
|---|---|
| ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՆՍԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՆԻՑ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՆԻՑ |
| ՄԻՆՍԿԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԳԱՀ՝ | ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ |
| _____ Բ. Վ. ԲԱՏՈՒՐԱ | _____ Է. Ֆ. ՂԱԶԱՐՅԱՆ |
| ,, 18,, սեպտեմբերի 2013թ. | ,, 18 ,,սեպտեմբերի 2013թ. |

# СОГЛАШЕНИЕ

**Между Минской областью Республики Беларусь и Вайоц дзорским марзом Республики Армения о торгово-экономическом, научно-техническом и культурном сотрудничестве**

Минская область Республики Беларусь и Вайоц дзорский марз Республики Армения, именуемые в дальнейшем "Сторонами", исходя из намерений построения и развития отношений равноправного и доверительного партнерства;

в соответствии с действующими между Республикой Беларусь и Республикой Армения договорами, способствующими развитию сотрудничества в различных областях;

принимая во внимание установленные дружественные отношения между Минской областью Республики Беларусь и Вайоц дзорским марзом Республики Армения, договорились о нижеследующем:

**Статья 1**

Стороны будут стремиться развивать долговременные и всесторонние торгово-экономические и научно-технические связи на основе равноправия, взаимопонимания, уважения и доверия.

**Статья 2**

Стороны окажут содействие в установлении контактов между хозяйствующими субъектами Минской области Республики Беларусь и Вайоц дзорского марза Республики Армения в целях поощрения взаимовыгодного сотрудничества, уделяя особое внимание вопросам производственной кооперации и созданию совместных предприятий.

**Статья 3**

Стороны будут оказывать поддержку хозяйствующим субъектам, осуществляющим экономическое сотрудничество в различных формах, в частности, путем разработки и реализации совместных целевых программ и проектов, развития инвестиционного сотрудничества, проведения выставочно-ярмарочных мероприятий.

**Статья 4**

Взаимодействие Сторон будет реализовываться на основе соответствующих договоров, соглашений, протоколов, заключаемых хозяйствующими субъектами, при этом подписавшие их юридические лица несут полную ответственность за исполнение своих обязательств.

**Статья 5**

Стороны осуществляют обмен информацией по вопросам регулирования предпринимательской деятельности, иностранных инвестиций, а также по другим вопросам, представляющим взаимный интерес.

Стороны обязуются своевременно информировать друг друга об изменениях в законодательствах Республики Беларусь и Республики Армения, которые могут повлиять на выполнение настоящего Соглашения.

**Статья 6**

Стороны будут содействовать взаимному открытию представительств юридических лиц на своих территориях в соответствии с достигнутыми двусторонними договоренностями и способствовать созданию благоприятных условий для их деятельности.

**Статья 7**

Каждая из Сторон в соответствии с действующим законодательством будет стремиться обеспечить на своей территории благоприятные условия для осуществления хозяйствующими субъектами торгово-экономического и научно-технического сотрудничества.

**Статья 8**

Стороны намерены обмениваться информацией об опыте работы учреждений культуры и искусства, творческой деятельности национальных диаспор на своей территории.

Стороны будут формировать и углублять связи в области образования, здравоохранения, социальной защиты населения, спорта и туризма.

**Статья 9**

Настоящее Соглашение вступает в силу с даты его подписания и будет действовать до тех пор, пока одна из Сторон не уведомит в письменной форме другую Сторону о своем намерении прекратить его действие. В этом случае действие Соглашения прекращается по истечении трех месяцев со дня получения уведомления другой Стороной.

Совершено в городе „ _____„ „___„ _____2013 г. в двух экземплярах на русском и армянском языках, причем оба экземпляра имеют одинаковую силу.

**За Минскую область**
**Республики Беларусь**

**Председатель Минского областного**
**испонителного комитета**

**_____ Б. В. БАТУРА**

**„ 18 „ сентября 2013 г.**

**За Вайоц дзорский марз**
**Республики Армения**

**Губернатор**
**Вайоц дзорского марза**

**_____ Э. Ф. КАЗАРЯН**

**„ 18 „ сентября 2013 г**